

պետէն, և ուխտաւորները կը կարծէին թէ ան «ցամ-
քած հոր»ն է ուր պահուեցաւ նուիրական հուրը, եւ
որուն տեղ Նեեմիի օրով աման մը գտնուեցաւ:

Աբբայ ջրհոսի ջուրը աղբիւր չունի. ջուրը հոն
կը շատնայ ծորումով: Տարւոյն մեծագոյն մասին մէջ
ջրհորը կը բարձրանայ 20-25 մեզր խորութեամբ: Բայց
ձմրան մեծ անձրևներուն կը բարձրանայ ան մինչեւ
բերանը և կը հոսի ձորին մէջ: Այս առատութիւնը որ
տեղացիներուն համար առատ հունձքի նշան մըն է,
նշանաւոր հանդիսացած է ջրհորին շուրջը շատ օրե-
քու մէջ կատարուած հանդիսութեամբ (Bar. gr. էջ 173
-174): Տեղացի հայերն ալ մեծ պահոց առաջին եր-
կուշաբթին կ'երթան Յորայ ջրհորին մօտ խրախճանքի
համար՝ որ աւանդութիւն մըն է:

Յովհաննէս եպիսկոպոս Երուսաղէմացի կը գրէ
այս ջրհորի մասին. «Եւ մեք Աբբայ հոր (ըստ ռամ-
կաց) ասեմք, այսինքն մեծ հոր, և ամ յամէ ի Ժա-
մանակս ձմրան՝ յատակէ հորոյն դիմէ ջուրն զառի-
վեր, և ի բերանոյն իբր զմեծ գետ հոսի ի ձորն, եւ
գնայ խառնի ի մեռած ծովն: Եւ այս է նշան առա-
տութեան Սրբոյ քաղաքիս Երուսաղիմի, և այն տա-
րին որուն ոչ ելանէ ջուրն, զուշակ է նուագութեան
ամենայն իրաց, իբրև զգետն Նեղոս որ ի յեգիպտոս
(Հան. էջ 253^(*)):

20. Եսայի Մարգարէին գերեզմանը. — Աբբայ հո-
րէն դէպի հիւսիս դառնալով՝ ճանապարհին վրայ կը
տեսնուի ճերմակ թթենիի ծառ մը քարակոյտի բարձ-

(*) Աբբայ հոր ժողովրդական կոչումը կամ այն է որ եկեղե-
ցական մը շինած ու նորոգած է նոյն հորը եւ կամ Յորայ հոր